World Vision
ARMENIA

11.05.2023
ՀՀ Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի համայնքապետ
Պրն.Ա. Իգիթյանին

Հարգելի պրն. Իգիթյան,

Ի պատասխան Ձեր 14.03.2023 թվականի նամակի՝ ուղղված «**Կանանց հզորացում տնտեսական զարգացման համար**» ծրագրի շրջանակում Վորլդ Վիժն Հայաստանի կողմից համաֆինանսավորվող համայնքային փոքր ծրագրի իրականացման համար նախահաշվին և ակնկալվող աջակցությանը, տեղեկացնում եմ, որ սույն ծրագրի միջոցներից Վորլդ Վիժն Հայաստանը կարող է հատկացնել մինչև 1.200.000 ՀՀ դրամ՝ հատկորոշված խաղասարքերի ձեռքբերման համար (գործընթացը ընթացքի մեջ է): Ուրախ ենք, որ Ախուրյանի համայնքապետարանը ևս նախատեսել է իր ներդրումն ունենալ ծրագրի շահառու կանանց կողմից առաջարկված գաղափարի իրականացման համար:

Ծրագրի մասին
«**Կանանց հզորացում տնտեսական զարգացման համար**» ծրագիրը իրականացվում է ՄԱԶԾ «Կանանց տնտեսական հզորացում Հարավային Կովկասում, փուլ 2» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Ավստրիական Զարգացման Գործակալության, Շվեյցարական զարգացման համագործակցության և ՄԱԿ Կանայք կազմակերպության կողմից և իրականացվում է ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ:

«**Կանանց հզորացում տնտեսական զարգացման համար**» ծրագիրը նպատակ ունի սոցիալապես անապահով կանանց աջակցել իրենց հնարավորությունների բացահայտմամբ, տնտեսական հնարավորությունների ու համապատասխան տեղեկատվության կիրառմամբ դառնալ ինքնազբաղ կամ միանալ ֆորմալ աշխատաշուկային, ինչպես նաև մասնակցել տեղական որոշումների կայացմանը: Ծրագրի շահառուները Գեղարքունիքի և Շիրակի մարզերի խոշորացված համայնքների կանայք են:

Շնորհակալ ենք Ձեզ հետ համագործակցության և աջակցության համար:

Հարգանքով՝

Մերի Սարգսյան
ՎՎ «Կանանց հզորացում տնտեսական զարգացման համար» ծրագրի ղեկավար